ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 1

04 փետրվարի 2011թ
h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ
077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանարպետության օրենքի 33 - րդ հոդվածի 2- րդ կետի « ա » ենթակետի դրույթով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հաստատել Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքի 2011 թվականի բյուջեի եռամսյա համամասնությունները համաձայն հավելվածի:

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 2

05 ապրիլի 2011թ
h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ
077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 34 - րդ հոդվածի 5- կետի դրույթով .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Երևանի Մենեջմենթի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող Արտակ Մկրտչյանին ուսման վճար փոխանցել 2011 թվականի բյուջեի՝
«Տող 2941, բաժին 09,խումբ 4, դաս 1 հոդված 4729 » - ից 20.0 հազար դրամ :

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 3

04 ՄԱՅԻՍԻ 2011թ

h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ
077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16- րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի հուլիսի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին>> թիվ 1231 որոշման պահանջներին համապատասխան, հաստատել համայնքային նշանակության փողոցները և անշարժ գույքի համարակալման և հասցեավորման փաստաթղթերը, համաձայն որի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

ՀՀ Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքում Ադելա Բաղալյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող առանձնատանը տալ հասցե՝ փողոց 4, փակուղի 1 տուն 3:

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 4

28 մայիսի 2011թ
h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ
077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 34 - րդ հոդվածի 5- կետի դրույթով .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի երկրորդ կուրսի ուսանող Վանիկ Ծառուկյանին փոխանցել ուսման վճար 2011 թվականի բյուջեի՝
«Տող 2941, բաժին 09,խումբ 4, դաս 1 հոդված 4729 » - ից 20.0 հազար դրամ :

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 5

15 ՀՈՒՆԻՍԻ 2011թ

h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ

077 888 355 0-93-31-78-18

Լյովա Սահակյանի բնակելի տան իրավական հիմքերի վերականգնման մասին :

Ղեկավարվելով « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Լյովա Նիկոլի Սահակյանի / ծնված 1940թ./ սեփականության իրավունքով պատկանող Արեգնադեմ համայնքի փողոց 10, տուն 2 հասցեում գտնվող 2429մ^2 տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների / համաձայն հատակագծի / նկատմամբ իրավական հիմքերը և ճանաչել սեփականության իրավունքը: Շինությունը կառուցվել է 1981թվականին և հետագայում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման Արեգնադեմի տեղական հանձնաժողովի 25.05.1992թվականին թիվ 7 որոշմամբ տնամերձ հողամասը սեփականաշնորհվել է Լյովա Սահակյանին և այն չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, չի հակասում քաղաքաշինական նորմերին, հետևաբար սույն օրենքի ուժով համարվում է Լյովա Սահակյանի սեփականությունը:
2. Շինության չափերը ենթակա են ճշտման կադաստրի տ/ս –ի կողմից:
3. Սույն որոշումը ենթակա է գրանցման կադաստրի տ/ս –ում:

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 6

գ. Արեգնադեմ
<< 29 >> հունիսի 2011թ.

Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարահանման հանձնաժողով եւ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին

Ղեկավարվելով 29.12.1996թ. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» եւ 29.03.2002թ. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Արեգնադեմ համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման եւ իրականացման նպատակով.

1. Ստեղծել՝

1)քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին եւ շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:

2) Համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրենին եւ հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից:

3) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

ա.փրկարարական խումբ՝ 1/9 անձնակազմով, հրամանատար՝ Հովհաննիսյան Մամիկոն

բ. կապի խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մովսիսյան Վիկտոր

գ. քիմիական, ճառագայթային դիտարկման կետ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Պողոսյան Աշոտ

դ. անհատական պաշտպանության միջոցներ բաշխման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Տոնոյան Սամվել

ե. հասարակական կարգի պահպանման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ծառուկյան Սամվել

զ. գյուղատնտեսական կենդանիների եւ բույսերի պաշտպանության խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Երեմյան Ահարոն

2.Հանձնարարել՝

1) քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝

ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, գույքով եւ տեխնիկայով.

բ. կազմակերպել եւ իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի եւ բնակչության ուսուցումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ. թիվ 134-Ն որոշման.

գ. կազմել եւ յուրաքանչյուր տարի մինչեւ հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման.

3.Համայնքապետարանի քարտուղարին՝

սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ

Արեգնադեմ համայնքի ղեկավար՝ Ա. Հազրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N : 7

07 ՀՈՒԼԻՍԻ 2011թ

h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ

077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 83-րդ հոդվածի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Թույլատրել քաղաքացի Մկրտիչ Ումրոյանին իր վարձակալած 24.84 հա (պայմանագիր N1 կնքված 01-07-2011թ) արոտավայրի վրա կատարել հետախուզական աշխատանքներ, կնքել համապատասխան պայմանագիր նոտարական վավերացմամբ:

Հողամասն հետագայում չօգտագործելու դեպքում հանձնել գյուղապետարանին նախնական տեսքով:

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 8

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2011թ

h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ

077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԸ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 75- րդ հոդվածի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12- ի թիվ 286 որոշման դրույթներով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արեգնադեմ համայքնի ավագանու 2011 թվականի օգոստոսի 5 –ի թիվ 14 որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականությանը պատկանող 028-001 ծածկագրի տակ գտնվող հողատարածքից 0.8 հա տարածք հատկացնել դպրոցի շենք կառուցելու համար համաձայն կից ներկայացվող հատակագծի:

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 9

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2011թ
հ/հ ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ
077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16- րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի հուլիսի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին>> թիվ 1231 որոշման պահանջներին համապատասխան, հաստատել համայնքային նշանակության փողոցները և անշարժ գույքի համարակալման և հասցեավորման փաստաթղթերը, համաձայն որի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքում Արմինե Սերոբյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող առանձնատանը տալ հասցե՝ փողոց 12 , տուն 4:

ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԶՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵԳՆԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N: 10

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2011թ
h/h ----------

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
գ. ԱՐԵԳՆԱԴԵՄ
077 888 355 0-93-31-78-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ի կատարումն Շիրակի մարզային փրկարարական վարչության « Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011թվականի հիմնական միջոցառումների պլան » - ի և « 2011թվականի մարզի թվով 30 գյուղական համայնքներում շտաբային ուսումնավարժություններ անցկացնելու մասին « Շիրակի մարզպետի թիվ 62- Ա որոշման համաձայն, ս/թ.-ի հոկտեմբերի 18-ին Արեգնադեմ համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն » Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում« թեմայով:

Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով .

1. Նշանակել՝

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ - աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մկրտչյանին

Շտաբի կազմում ընդգրկել համայնքի ՔՊ կազմավորումների ղեկավարներին :

Ուսումնավարժության արդյունքների ամփոփման խմբի պետ - Ս. Տոնոյանին

2. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

Համայնքի տարահանման և արտակարգ իրավիճակների հանձնաժողովների , ՔՊ կազմավորումները:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

Մշակել և մինչև 30.09.2011թվականին իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը:

4. Ուսումնավարժության ղեկավարումը իրականացնել գյուղապետի մշակման կառավարման կետից:

Համայնքի ղեկավարման - ՔՊ պետ՝ Ա. Հազրյան